ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ
Մասնակիցների ընդհանուր ժողովի

«03» հոկտեմբերի 2025թ.

թիվ 04/2025 որոշմամբ

Մասնակիցների ընդհանուր ժողովի նախագահ՝

Դավիթ Հարությունյան

Կ Ա Ր Գ

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Ուժի մեջ է՝ 2025թ-ի հոկտեմբերի «03»-ից

ԲԱԺԻՆ Ի. ՆՊԱՏԱԿԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ, ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ

1. Արտարժութային գործառնությունների իրականացման կարգը սահմանում է Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ-ի կողմից արտարժութային փոխարկումների իրականացման գործընթացը համաձայն ՀՀ օրենսդրության:

ԳԼՈՒԽ 2. ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2. Արտարժութային գործառնությունների իրականացման կարգի պահանջները տարածվում են նկարագրվող գործառույթներում ներգրավված Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ-ի աշխատողների վրա:

ԳԼՈՒԽ 3. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

3. Արտարժութային գործառնությունների իրականացման կարգը մշակված է ՀՀ Օրենսդրության և ՀՀ Կենտրոնական բանկի իրավական ակտերի պահանջներին համապատասխան:
4. Արտարժութային գործառնությունների իրականացման կարգն առնչվում է հետևյալ հիմնական փաստաթղթերի հետ.
   1) «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության Օրենք (փոփոխություններով):

ԳԼՈՒԽ 4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

5. Արտարժութային գործառնությունների իրականացման կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝
   1) Ընկերություն՝ Պրեմիում Ինվեսթ ՍՊԸ:

2) Արտարժույթ՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված միջոցները, այն է՝

ա) օտարերկրյա մեկ կամ մի քանի պետությունների տարածքում շրջանառության մեջ գտնվող, ինչպես նաև շրջանառությունից հանված կամ հանվող, բայց փոխանակման ենթակա օրինական վճարամիջոց հանդիսացող թղթադրամներն ու մետաղադրամները,

բ) բանկային հաշիվներում և ավանդներում գտնվող օտարերկրյա պետությունների դրամական միավորներով և (կամ) միջազգային դրամական միավորներով արտահայտված միջոցները:

3) Օրենք՝ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

4) Կարգ՝ Ընկերության «Արտարժութային գործառնությունների իրականացման կարգ»:

5) Խումբ՝ Արտարժութային գործառնությունների խումբ:

6) Սպրեդ - գնանշվող արտարժույթի առք ու վաճառքի փոխարժեքների տարբերություն:

7) Forex - Արտարժույթի միջազգային շուկա:

8) Զուտացում (netting) – միևնույն կատարման օրով արտարժույթի փոխանակման գործարքներ իրականացնելիս կողմերի համաձայնությամբ փոխադարձ պահանջների ու պարտավորությունների հաշվանց:

9) Գործառնական օր ծրագիր -Ընկերության կողմից իրականացված գործառնությունների հաշվառման համար նախատեսված ծրագրային ապահովում:

10) Հաճախորդ՝ ֆիզիկական անձ և ոչ ֆինանսական ոլորտի իրավաբանական անձ:

11) Արտարժութային սվոփ գործարք - արտարժույթի առքի ու վաճառքի միաժամանակյա գործարք, այն է՝ արտարժույթի վաճառք /կամ առք/ պայմանով, որ այն նույն ծավալով պայմանագրում նշված օրը հետ է գնվելու /կամ վաճառվելու/՝ գործարքի կնքման պահին ֆիքսված փոխարժեքներով:

ԳԼՈՒԽ 5. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

6. Կարգն ունի հետևյալ հավելվածները.

1) Հավելված 1՝ «Արտարժույթի փոխանակման հայտ»:

ԲԱԺԻՆ II. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7. Կարգը սահմանում է Ընկերությունում արտարժութային գործառնությունների իրականացման գործընթացում՝
   1) Փոխարժեքների սահմանման գործընթացը,
   2) Ֆինանսական կառույցների հետ արտարժութային փոխարկման և արտարժութային սվոփ գործառնությունների իրականացման գործընթացը,
   3) Հաճախորդների հետ արտարժութային փոխարկման և արտարժութային սվոփ գործառնությունների իրականացման գործընթացը,
   4) Կարգի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը և ներքին աուդիտի իրականացումը:

ԳԼՈՒԽ 2. ՓՈԽԱՐԺԵՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

8. Յուրաքանչյուր աշխատանքային օրվա սկզբին, մինչև 10:00-ը, Ընկերության Խմբի կողմից հաշվարկվում են Ընկերության կողմից գնանշվող արտարժույթների անկանխիկ առք ու վաճառքի փոխարժեքները, մուտքագրվում Գործառնական օր ծրագիր և հաստատվում Ընկերության գործադիր տնօրենի կողմից:

9. Խումբը փոխարժեքները հաշվարկելիս ԱՄՆ դոլարի փոխարժեքը ՀՀ դրամով սահմանում է հաշվի առնելով հետևյալ գործոնները՝

   ա) ՀՀ միջբանկային շուկայում նախորդ օրվա ձևավորված փոխարժեքների միջին մեծությունը.

   բ) ՀՀ միջբանկային շուկայից դուրս ձևավորված փոխարժեքների մեծությունը.

   գ) ՀՀ ֆինանսական շուկայում ԱՄՆ դոլարի նկատմամբ առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունը, ինչպես նաև Ընկերության առաջարկի կամ պահանջարկի մեծությունները.

   դ) այլ գործոններ (շուկայի ուսումնասիրության հիման վրա կատարված կանխատեսումներ, այլ սուբյեկտիվ գործոններ, ինչպես նաև ֆորս-մաժորային պայմաններ):

10. Փոխարժեքները սահմանվում են հետևյալ կերպ.

- անկանխիկ USD/AMD գնանշման Սպրեդը կազմում է մինչև 5 ՀՀ դրամ:

- անկանխիկ EUR/AMD փոխարժեքները հաշվարկվում են USD/AMD և FOREX շուկայի տվյալ աշխատանքային օրվա ժամը 9.50-ի վիճակով EUR/USD գնանշումների հիման վրա հետևյալ բանաձևերով.

առքի փոխարժեքի դեպքում՝ (Forex գնանշում - 0.3%)*(BID$^{USD/AMD}$)

վաճառքի փոխարժեքի դեպքում՝ (Forex գնանշում + 0.3%)*(OFFER$^{USD/AMD}$)

որտեղ BID$^{USD/AMD}$ - USD/AMD գնանշման առքի փոխարժեքն է,

OFFER$^{USD/AMD}$ - USD/AMD գնանշման վաճառքի փոխարժեքն է

Forex գնանշում - տվյալ արտարժույթի միջազգային փոխարժեքն է ԱՄՆ դոլարի նկատմամբ

- անկանխիկ RUB/AMD գնանշումները հաշվարկվում է USD/AMD և FOREX շուկայի տվյալ աշխատանքային օրվա ժամը 9.50-ի վիճակով USD/RUB գնանշումների հիման վրա հետևյալ բանաձևերով.

առքի փոխարժեքի դեպքում՝ (BID$^{USD/AMD}$)/(Forex գնանշում + մինչև 0.4%)

վաճառքի փոխարժեքի դեպքում՝(OFFER$^{USD/AMD}$)/(Forex գնանշում – մինչև 0.4%)

11. Առանձին դեպքերում (արտարժույթի երկրում տոնական օրվա, ներքին և արտաքին ֆինանսական շուկաներում անկայունության աճի, Ընկերության արտարժութային պահանջարկի կամ առաջարկի կտրուկ տատանման և այլ պատճառներով) Խումբը կարող է փոխարժեքներ սահմանելիս Սպրեդը մեծացնել:

12. Աշխատանքային օրվա ընթացքում Խմբի կողմից փոխարժեքների փոփոխությունը հաստատվում է գործադիր տնօրենի կողմից:

ԳԼՈՒԽ 3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

13. Ֆինանսական կառույցների հետ արտարժութային փոխարկման և արտարժութային սվոփ գործառնությունները կնքվում են հեռախոսով կամ էլեկտրոնային կապի այլ միջոցներով, որի ընթացքում երկու կողմերը համաձայնեցնում են գործարքի հիմնական պայմանները, այդ թվում՝

- գործարքի կնքման ամսաթիվը.
- Վաճառող և Գնորդ կողմերի հստակեցումը.
- գնվող և վաճառվող արժույթների անվանումները և գումարները, փոխարժեքը.
- հակադարձ գործարքի փոխարժեքը՝ արտարժութային սվոփի դեպքում.
- գործարքի իրականացման ժամկետները.
- վճարման տվյալները:

14. Ֆինանսական կառույցների հետ 20 000 000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող արտարժութային փոխարկումները և սվոփ գործարքները նախապես բանավոր համաձայնեցվում են գործադիր տնօրենի հետ:

15. Ֆինանսական կառույցների հետ արտարժութային փոխարկումները և սվոփ գործարքները կատարվում են.

1) Այն ֆինանսական կառույցների հետ, ում հետ Ընկերությունը ստորագրել է «Արտարժույթի և դրամային շուկաներում համագործակցության գլխավոր համաձայնագիր», արտարժույթի առք ու վաճառքի և սվոփ գործարքների հաստատումը իրականացվում է նշված համաձայնագրով վերջիններիս համար սահմանված արարողակարգով:

2) Մնացած ֆինանսական կառույցների հետ, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետում սահմանված դեպքի, արտարժույթի առք ու վաճառքի գործարքները իրականացվում են արտարժույթի առք ու վաճառքի յուրաքանչյուր գործարքի համար կնքվող պայմանագրի հիման վրա:

3) Այն ՀՀ բանկերի հետ, որտեղ Ընկերությունը ունի կնքված գործարքի արժույթներով հաշվարկային հաշիվներ և նախատեսված է գործարքի վճարումները կատարել նշված

հաշվարկային հաշիվներով, գործարքների հաստատումը իրականացվում է տվյալ բանկում սահմանված ընթացակարգով:

16. Համապատասխան համաձայնագրի առկայության դեպքում Ընկերությունը ֆինանսական կառույցների հետ արտարժույթի փոխանակման և սվոփ գործարքներ իրականացնելիս կարող է կիրառել netting (զուտացում): Այդ դեպքում.

ա) միևնույն կատարման օրով և միևնույն արժույթով գումարները, որոնք յուրաքանչյուր կողմ պետք է վճարի, գումարվում են.

բ) եթե մեկ կողմի ընդհանուր պարտավորությունները մեկ արժույթի գծով գերազանցում են մյուս կողմի պարտավորությունները նույն արժույթի գծով, ապա տարբերությունը փոխանցում է այն կողմը, որի պարտավորությունները ավելի մեծ են.

գ) եթե կողմերի ընդհանուր պարտավորությունները միևնույն արժույթով համընկնում են, ապա դրանք կարգավորվում են առանց միջոցների հոսքերի.

17. Ֆինանսական կառույցների հետ արտարժույթի առք ու վաճառքի և արտարժութային սվոփ պայմանագրերը ստորագրվում են Ընկերության գործադիր տնօրենի կողմից: Նախապես պահանջվում է պայմանագրի վրա Խմբի ղեկավարի կամ նրա բացակայության դեպքում նրան փոխարինող անձի ստորագրության առկայությունը:

18. Ֆինանսական կառույցի հետ երկկողմանի կնքված արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրի բնօրինակը (կամ պատճենը) ստանալուց կամ Կարգի 15-րդ կետի համաձայնագրի առկայության դեպքում գործարքը կնքելուց հետո, Խմբի կողմից Գործառնական օր ծրագիր մուտքագրում է արտարժույթի առք ու վաճառքի պայմանագիրը:

19. Խմբի կողմից Գործառնական օր ծրագիր մուտքագրված արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրերի հիման վրա արտարժույթի փոխանակումների հաշվապահական ձևակերպումներ տալու և անհրաժեշտ փոխանցումները կատարելու համար Հետգործառնական սպասարկման խմբի համար հիմք է հանդիսանում՝

- արտարժույթի փոխանակումների գլխավոր համաձայնագիր ստորագրած ֆինանսական կառույցների համար՝ Խմբի կողմից Գործառնական օր ծրագիր մուտքագրված արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրի էլեկտրոնային տարբերակը և արտարժույթի փոխանակման գործարքի ծանուցագիրը,

- մնացած ֆինանսական կառույցների համար՝ վերջիններիս հետ կնքված արտարժույթի առք ու վաճառքի պայմանագիրը, արտարժույթի փոխանակման գործարքի անդորագիրը և Գործառնական օր ծրագիր մուտքագրված արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրի էլեկտրոնային տարբերակը:

20. Ֆինանսական կառույցի հետ երկկողմանի կնքված արտարժութային սվոփ պայմանագրի բնօրինակը (կամ պատճենը) ստանալուց կամ Կարգի 15-րդ կետի համաձայնագրի առկայության դեպքում գործարքը կնքելուց հաստատումը ստանալուց հետո այն Խմբի կողմից տրամադրվում է Հետգործառնական սպասարկման խմբին համապատասխան հաշվապահական ձևակերպումներ տալու և անհրաժեշտ փոխանցումները կատարելու համար:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՍՎՈՓ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

21. Հաճախորդների հետ արտարժութային փոխարկման և արտարժութային սվոփ գործառնությունները կնքվում են հեռախոսով կամ էլեկտրոնային կապի այլ միջոցներով, որի ընթացքում երկու կողմերը համաձայնեցնում են գործարքի հիմնական պայմանները, այդ թվում՝

- գործարքի կնքման ամսաթիվը.
- Վաճառող և Գնորդ կողմերի հստակեցումը.
- գնվող և վաճառվող արժույթների անվանումները և գումարները, փոխարժեքը.
- հակադարձ գործարքի փոխարժեքը՝ արտարժութային սվոփի դեպքում.
- գործարքի իրականացման ժամկետները.
- վճարման տվյալները:

22. Հաճախորդների հետ 20 000 000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող արտարժութային փոխարկումները և սվոփ գործարքները նախապես բանավոր համաձայնեցվում են գործադիր տնօրենի հետ:

23. Հաճախորդների հետ փոխանակումները կատարվում են.

1) Այն Հաճախորդների հետ, ում հետ առկա է կնքված բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր, արտարժույթի առք ու վաճառքի հաստատումը իրականացվում է Արտարժույթի փոխանակման հայտի (Հավելված 1) միջոցով:

2) Մնացած Հաճախորդների հետ արտարժույթի առք ու վաճառքի գործարքները իրականացվում են արտարժույթի առք ու վաճառքի յուրաքանչյուր գործարքի համար կնքվող պայմանագրի հիման վրա:

24. Հաճախորդների հետ արտարժութային սվոփ գործարքները իրականացվում են յուրաքանչյուր գործարքի համար կնքվող պայմանագրի հիման վրա:

25. Համապատասխան համաձայնագրի առկայության դեպքում Ընկերությունը Հաճախորդների հետ արտարժույթի փոխանակման և սվոփ գործարքներ իրականացնելիս կարող է կիրառել netting (զուտացում): Այդ դեպքում.

ա) միևնույն կատարման օրով և միևնույն արժույթով գումարները, որոնք յուրաքանչյուր կողմ պետք է վճարի, գումարվում են.

բ) եթե մեկ կողմի ընդհանուր պարտավորությունները մեկ արժույթի գծով գերազանցում են մյուս կողմի պարտավորությունները նույն արժույթի գծով, ապա տարբերությունը փոխանցում է այն կողմը, որի պարտավորությունները ավելի մեծ են.

գ) եթե կողմերի ընդհանուր պարտավորությունները միևնույն արժույթով համընկնում են, ապա դրանք կարգավորվում են առանց միջոցների հոսքերի.

26. Հաճախորդների հետ արտարժույթի առք ու վաճառքի և արտարժութային սվոփ պայմանագրերը ստորագրվում են Ընկերության գործադիր տնօրենի կողմից: Նախապես պահանջվում է պայմանագրի վրա Խմբի ղեկավարի կամ նրա բացակայության դեպքում նրան փոխարինող անձի ստորագրության առկայությունը:

27. Հաճախորդի կողմից երկկողմանի կնքված արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրի բնօրինակը (կամ պատճենը) կամ Կարգի 23-րդ կետով սահմանված Արտարժույթի փոխանակման հայտը ստանալու դեպքում Խմբի կողմից Գործառնական օր ծրագիր մուտքագրում է արտարժույթի առք ու վաճառքի պայմանագիրը:

28. Խմբի կողմից Գործառնական օր ծրագիր մուտքագրված արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրերի հիման վրա արտարժույթի փոխանակումների հաշվապահական ձևակերպումներ տալու և անհրաժեշտ փոխանցումները կատարելու համար Հետգործառնական սպասարկման խմբի համար հիմք է հանդիսանում՝

- Ընկերության անվանատիրոջ հաշիվներով գործարք իրականացնող Հաճախորդի դեպքում՝ Խմբի կողմից Գործառնական օր ծրագիր մուտքագրված արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրի էլեկտրոնային տարբերակը,

- մնացած Հաճախորդների համար՝ վերջիններիս հետ կնքված արտարժույթի առք ու վաճառքի պայմանագիրը և Գործառնական օր ծրագիր մուտքագրված արտարժույթի առք ու վաճառքի պայմանագրի էլեկտրոնային տարբերակը:

29. Հաճախորդի հետ երկկողմանի կնքված արտարժութային սվոփ պայմանագրի բնօրինակը (կամ պատճենը) ստանալուց հետո այն Խմբի կողմից տրամադրվում է Հետգործառնական սպասարկման խմբին համապատասխան հաշվապահական ձևակերպումներ տալու և անհրաժեշտ փոխանցումները կատարելու համար:

ԲԱԺԻՆ III. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

30. Կարգով սահմանված գործառույթները/քայլերը իր ստորաբաժանումում կազմակերպելու և ապահովելու համար պատասխանատվություն է կրում Խմբի ղեկավարը:

ԳԼՈՒԽ 2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

31. Ընկերությունում Արտարժութային գործառնությունների համակարգման և դրանց պատշաճ իրականացման նկատմամբ ընթացիկ հսկողության պատասխանատու է հանդիսանում գործադիր տնօրենը: Կարգով սահմանված պահանջների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Ներքին աուդիտի ծառայությունը:

Հավելված 1

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՀԱՅՏ. FOREIGN CURRENCY EXCHANGE CLAIM

ԱՄՍԱԹԻՎ

DATE _____

ՀԱՃԱԽՈՐԴ CUSTOMER	
ՎԱՃԱՌՎՈՂ ԱՐԺՈՒՅԹԻ ԵԼՔԱԳՐՄԱՆ ՀԱՇԻՎ SOLD CURRENCY OUTFLOW ACCOUNT	
ԳՆՎՈՂ ԱՐԺՈՒՅԹԻ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ՀԱՇԻՎ PURCHASED CURRENCY INFLOW ACCOUNT	
ԳՈՒՄԱՐԸ AMOUNT	
ՎԱՃԱՌՎՈՂ ԱՐԺՈՒՅԹԸ ԵՎ ԳՈՒՄԱՐԸ (բառերով) TYPE AND AMOUNT OF THE CURRENCY SOLD (in words)	
ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՓՈԽԱՐԺԵՔԸ EXCHANGE RATE	
ԳՈՒՄԱՐԸ AMOUNT	
ԳՆՎՈՂ ԱՐԺՈՒՅԹԸ ԵՎ ԳՈՒՄԱՐԸ (բառերով) TYPE AND AMOUNT OF THE CURRENCY BOUGHT (in words)	

ՀԱՇՎԵՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 1. ---------- Կ.Տ.

ACCOUNT HOLDER SIGNATURE 2. ---------- S.P. _____

ՀԱՅՏԸ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է CLAIM ACCEPTED	